

### ԴԱՍ 5.1. Ավստրալիա և Օվկիանիա: Ընդհանուր աշխարհագրական ակնարկ

• • •

Եվրոպացիները Հարավային Երկրի մասին լսել էին նաև մալայացիներից: Դա էր պատճառը, որ նրանք քարտեզներում հարավային կիսագնդում տեղադրում էին այդ ենթադրյալ Երկրի ուրվագիծը՝ նշելով Terra Australis Incognita- հարավային անհայտ երկիր: Այդ ուրվագծերը քարտեզագիրների երևակայության արդյունքում սկսեցին մեծանալ, ինչը եվրոպացիներին արդեն սկսեց հրապուրել:

• • •

Ավստրալիան դարձավ Անգլիայի գաղութը: 18-րդ դարի վերջերից սկսվեց մայրցամաքի յուրացումը: Անգլիական կառավարությունը սկզբում Ավստրալիա էր արքայություն հանցագործներին, ինչի արդյունքում առաջացավ դատապարտյալների քաղաք **Սիդնեյը**: Այնուհետև օգտակար հանածոների հարուստ հանքավայրերի հայտնագործման , լավ արոտավայրերի առկայության շնորհիվ այսպես կոչված «երջանկություն որոնողները» ձգտեցին տեղափոխվել Ավստրալիա: Անգլիան մայրցամաքը հայտարարեց իր գաղութը:

• • •

Մայրցամաքի ձգվածությունը հյուսիսից հարավ 3200կմ. է, իսկ արևմուտքից արևելք՝ 3800կմ. է: Մայրցամաքից հյուսիս ընկած է Նոր Գվինեա խոշոր կղզին՝ մեծությամբ երկրորդն աշխարհում, որից առանձնանում է **Թորեսի** նեղուցով: Մայրցամաքից հյուսիս-արևմուտք **Մալայան** կղզեխումբն է, որի միջոցով Ավստրալիան երկրաբանական ոչ վաղ անցյալում կապ է ունեցել Եվրասիայի հետ: Մայրցամաքի արևմտյան ափերը ողողում են Հնդկական օվկիանոսի համեմատաբար սառը ջրերը (**ինչու՞**): Հարավային

ափերը՝ Հարավային օվկիանոսի սառը ջրերը, արևելյան ափերը՝ Խաղաղ օվկիանոսի տաք ջրերը:

Մայրցամաքից հարավ-արևելք գտնվում է **Թասմանիա** կղզին, որից բաժանվում է **Բասի** նեղուցով:

*Քարտեզի վրա գտնվեք մայրցամաքի ծայրակետերը և որոշեք դրանց աշխարհագրական կոորդինատները:*

Մայրցամաքի ափագիծը բավականին թույլ է մասնատված: Այդ տեսանկյունից քիչ են տարբերվում հյուսիսը և հարավը: Հյուսիսում մայրցամաքի մեջ բավականին խորը մխրձվել է Կարպենտարիա ծովածոցը՝ առաջացնելով **Քեյփ Յորք** և **Անհեմլենդ** նշանավոր թերակղզիները: Հյուսիսում ափերը ողողում են **Թիմորի** և **Արաֆուրյան** ծովերը: Հարավում էլ լայն ձակատով ցամաքի մեջ խորացել է **Մեծ Ավստրալական** ծովածոցը:

Մայրցամաքի հյուսիս-արևելյան ափերը ողողում է Կորալյան ծովը, որտեղ ջերմաստիճանային բարենպաստ պայմաններ են ստեղծվել կորալային պոլիպների զարգացման համար (**բացատրեք երևույթը**): Այստեղ է գտնվում աշխարհի ամենամեծ բուսթային գոյացությունը՝ **Մեծ արգելախութը՝ 2300կմ երկարությամբ**: Մայրցամաքի արևելյան ափերն էլ ողողում է Թասմանի ծովը:

• • •

Արևմտյան մասում, որտեղ պլատֆորմի կարծր, բյուրեղային հիմքը վեր է բարձրացել, տարածվում է ընդարձակ **Արևմտաավստրալական սարահարթը**:

Պլատֆորմի արևելյան մասում ճիշտ հակառակը՝ բյուրեղային հիմքը իջել է: Այստեղ էլ գտնվում է **Կենտրոնաավստրալական ընդարձակ դաշտավայրը**, որի առանձին տեղամասեր անգամ ծովի մակարդակից ցածր են:

• • •

Արևադարձային գոտու կենտրոնական մասով է անցնում +25° իզոթերմը (վերհիշեք հասկացությունը): Այստեղ ներքին շրջաններում, օդի ջերմաստիճանը հաճախ է անցնում +50°-ից, իսկ տեղումները շատ քիչ են՝ 100-200մմ: Այդ պատճառով էլ շատ տարածված են անապատները և կիսաանապատները: Ի տարբերություն Աֆրիկայի անապատների, այստեղ օազիսները բացակայում են (**ինչու՞**):

Մայրցամաքի ծայր հարավային մասն ընկած է մերձարևադարձային կլիմայական գոտու սահմաններում՝ ցայտուն արտահայտված կլիմայական երեք մարզերով:

Կլիմայի վրա մեծ ազդեցություն են թողնում արևմուտքում՝ Արևմտասլավոնական սառը, արևելքում՝ Արևելասլավոնական տաք, հարավում՝ Արևմտյան քամիների սառը օվկիանոսային հոսանքները:

• • •

Չնայած դրան, Ավստրալիայում կան այնպիսի բույսեր, որոնք հանդիպում են նաև Հարավային Աֆրիկայում, Հարավային Ամերիկայում, ինչպես նաև Հարավարևելյան Ասիայում: **Ինչպե՞ս կրացատրեք:**

Ավստրալիան **Էվկալիպտների (ավենի), ակացիաների և կազուարինաների հայրենիքն է:** Այստեղ հաշվվում է Էվկալիպտի ավելի քան 600 տեսակ, սկսած ցածրահասակ թփուտներից մինչև ավելի քան 100 մ բարձրություն ունեցողները, որոնք իսկական **պոմպի դեր են կատարում:** Էվկալիպտները տարածվում են մայրցամաքի հյուսիսային, ինչպես նաև Մեծ Ջրբաժան լեռների հողմակողմ լանջերին, առաջացնելով ընդարձակ, լուսավոր նոսր անտառներ:

• • •

Ֆիզիկաաշխարհագրական և ծագումնաբանական առանձնահատկությունների հիման վրա Օվկիանիան բաժանվում է չորս մասի՝

**1. Մելանեզիա.** հունարենից թարգմանած՝ սև կղզիներ: Ընդգրկում է **Նոր Գվինեա, Բիսմարկի, Սողոմոնի, Նոր Հեբրիդյան, Նոր Կալեդոնիա, Ֆիջի** և այլ կղզիներ: Կղզիներն ունեն մայրցամաքային և հրաբխային ծագում:

**2. Միկրոնեզիա.** հունարենից թարգմանած՝ փոքր կղզիներ: Ընդգրկում է՝ **Մարիանյան, Կարոլինյան, Մարշալյան, Նաուրու** և այլ կղզիներն ու կղզեխմբերը: Կղզիների մեծ մասը ունեն կորալային ծագում (ատոլներ են, օղակղզիներ), որոնց ներսում կան ծովալճակներ՝ լագուններ մնացածը՝ հրաբխային:

**3. Պոլինեզիա.** հունարենից թարգմանած՝ բազմաթիվ կղզիներ: Ընդգրկում է **Թոնգա, Հավայան, Սամոա, Տուվալու, Կուկի, Զատկի, Թաիթի** և այլ կղզիներ ու կղզեխմբեր: Կղզիներն ունեն առավելապես հրաբխային և կորալային ծագում:

**4. Նոր Զելանդիա,** որի մեջ մտնում են Հյուսիսային և Հարավային կղզիները: 1642թ. կղզիները հայտնաբերեց Արել Թասմանը: Նոր Զելանդիա են կոչել Հոլանդիայի Զելանդիա նահանգի անունով: Նոր Զելանդական կղզիները (269 հազ. քառ. կմ.) և Նոր Գվինեան (829 հազ. քառ. կմ) մեծությամբ երկրորդ կղզին աշխարհում) զբաղեցնում են Օվկիանիայի տարածքի մոտ 90%-ը:

• • •

Ավստրալական Միությունը, Նոր Զելանդիան, ինչպես նաև Թոնգան **Բրիտանական Համագործակցության անդամ երկրներ են:**

Եթե Ավստրալիայի մակերևույթը հիմնականում հարթ է, իսկ լեռնակազմական գործընթացները վաղուց ավարտվել են, ապա Օվկիանիայի մի շարք կղզիներում դրանք այսօր էլ ակտիվ շարունակվում են: **Ինչու՞:** Հրաբխային և **սեյսմիկ անկայուն գոտիներով** հատկապես առանձնանում են՝ Նոր Գվինեա, Նորգելանդական և Հավայան կղզիները: Հավայան կղզիներում են գտնվում Մաունա Լոա, Մաունա Կեա և աշխարհի ամենակտիվ՝ Կիլաուեա հրաբուխները: Նոր Գվինեա կղզում են գտնվում աշխարհամասի ամենաբարձր **Մաոկե լեռները, որի Զայա գագաթը մեր Բիբլիական Արարատից ցածր է ընդամենը 35 մով:**

Օվկիանիայի կղզիներում հայտնաբերվել են նիկելի, երկաթաքարի, մանգանի, պղնձի, ոսկու, ածխի, ֆոսֆորիտների հարուստ պաշարներ:

• • •

**Կլիման** տիպիկ *արևադարձային* է՝ շուրջ տարին դրական ջերմաստիճաններով: Մշտապես փչող պասսատները բերում են առատ տեղումներ: Օվկիանիայի արևմտյան շրջաններում ամռանը պասսատները փոխարինվում են մուսսոններով՝ ավելի խոնավացնելով տարածքի կլիման: Թե՛ կղզիներում և թե՛ Ավստրալիայի ափամերձ շրջաններում հաճախակի են կործանարար արևադարձային փոթորիկները՝ **թայֆունները:**

• • •

*Մայրցամաքն աչքի է ընկնում վառելիքային և մետաղական օգրակար հանածոների հարստությամբ և մեծ բազմազանությամբ:* Կենտրոնական և հարավարևելյան շրջաններում կան ածխի, ինչպես նաև նավթի ու բնական գազի զգալի պաշարներ: Կենտրոնաավստրալական դաշտավայրի հյուսիսում է **պղնձի** աշխարհի խոշորագույն հանքավայրերից մեկը՝ **Մաունթ Ալգան,** իսկ հարավում՝ բազմամետաղային խոշոր հանքավայր **Բրոքեն Հիլը:** Մայրցամաքը շատ հարուստ է նաև՝ **բոքսիտներով, ուրանի, երկաթի, մանգանի, անագի, վոլֆրամի և ոսկու** պաշարներով:

• • •

Մայրցամաքի ներքին ընդարձակ շրջանները՝ տարածքի շուրջ 60% -ը

պատկանում են ներքին հոսքի ավազանին: Գետային ցանցը համեմատաբար զարգացած է արևելյան շրջաններում: **Բացատրեք ինչու՞:** Մայրցամաքի միակ նշանավոր գետը՝ **Մուրեյն** է՝ **Դառլինգ** վտակով: Ներքին շրջաններում շատ են ոչ մշտահոս գետերը,չոր գետահունները, որոնց այստեղ **քրիկներ** են անվանում: Նշանավոր է **Կուպերս-քրիկը**, որը թափվում է **մնացորդային ծագման**, «**թափառող**» էյր լիճ, որը ծովի մակարդակից ցածր է 12 մ-ով:

Ավստրալիայի համար անփոխարինելի գանձ են համարվում ստորերկրյա ջրերի հսկայական պաշարները,որոնք լրացնում են մակերևութային ջրերի սակավությունը: Առանձնանում է Կենտրոնաավստրալական դաշտավայրի տարածքում գտնվող **Մեծ Արտեզյան ավազանը**: Այն զբաղեցնում է մոտ 1 մլն. 800 հազ. քառ կմ. տարածք: Դրա ջրերը լայնորեն օգտագործվում են կենցաղում,արդյունաբերության և գյուղատնտեսության մեջ:

• • •

Ավստրալիայի կենտրոնական և արևմտյան շրջաններում ընդարձակ մակերես են զբաղեցնում՝ **անապարները** և **կիսաանապարները**: Ուրվագծային քարտեզի վրա նշեք մայրցամաքի նշանավոր անապատները՝ Մեծ Ավազային,Մեծ Վիկտորիա,Գիբսոնի: